

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից

կրթության բնագավառում 2013 թ. գործունեության վերաբերյալ

2013թ. համագործակցելով մարզի համապատասխան կառույցների հետ /քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժիններ, վիճակագրական ծառայություն, համայնքապետարաններ, երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, և այլն/ անցկացվել է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, որը կազմում է 5736, և նրանց ընդգրկումը մարզային ենթակայության 47 դպրոցներում, որոնք կոմպլեկտավորվել են 465 դասարաններում: Քանի որ մարզում չի գործում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գիշերօթիկ դպրոց, ուստի այդ կարգի 46 երեխաների համար ներառական կրթություն են իրականացնում Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցը /31 երեխա/ և Վայքի հիմնական դպրոցը /15 երեխա/: Իսկ Շատինի և Եղեգիսի միջն. դպրոցներում իրականացվում է տնային պայմաններում ուսուցում 4 հաշմանդամ երեխաների համար: Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզային ենթակայությամբ գործում է 47 հանրակրթական դպրոց և 17 համայնքային ենթակայությամբ մանկապարտեզ: Այդ շենքերի 90 տոկոսը վերջին տարիներին հիմնանորոգվել են: 2013թ. ՀՀ պետբյուջեի ֆինանսավորմամբ 29 478 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Մալիշկայի թիվ 2, Զառիթափի, Գոմքի միջն. և Եղեգնաձորի երաժշտական դպրոցներում: 17 դպրոցներ ջեռուցվում են գազի լրկալ կաթսայատան միջոցով, մնացածները՝ էլեկտրական տեներով:

Շոշափելի են մարզի դպրոցականների հաջողությունները առարկայական օլիմպիադաներում և բուհերի ընդունելության քննություններում: Առարկայական օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են շուրջ 800 դպրոցական: Նրանցից 42-ը իրավունք են նվաճել մասնակցելու հանրապետական փուլին, որոնցից 20-ը վերադարձել են դիպլոմներով և գովասանագրերով: Միասնական քննություններին մասնակցել են 407 շրջանավարտներ, որոնցից մոտ 27-ը ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր:

2013թ. կրթության պետական տեսչության կողմից մարզի 21 դպրոցներում կատարվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքների տեսչական համալիր ուսումնասիրություններ և բարձր դասարանների աշակերտների շարժը: Ուսումնասիրությունների արդյունքում կազմվեց ամփոփիչ արձանագրություն, որը

ամենայն մանրամասնությամբ քննարկվեց դպրոցների տնօրենների ընդլայնված խորհրդակցությունում: Քննարկումից հետո կատարված խախտումները վերացնելու և արձանագրված թերությունները շտկելու համար դպրոցների տնօրեններին տրվեցին գրավոր հանձնարարականներ: Տրված հանձնարարականները կատարվել են ժամանակին ու պատշաճ ձևով, որի մասին դպրոցների տնօրենները գրավոր տեղեկացրել են կրթության պետական տեսչությանը: Միաժամանակ մի շարք դպրոցներում արձանագրվեցին առարկայական ցածր առաջադիմություն, որոնց հանձնարարվեց անդրադառնալ 2013-2014 ուստարվա առաջին կիսամյակի ավարտին:

Մարզում համայնքային ենթակայությամբ ՀՈԱԿ-ի կարգավիճակով գործում է 17 մանկապարտեզ որոնցում ընդգրկված են 977 նախադպրոցական տարիքի երեխաներ, որից 5-6 տարեկան են 364 երեխա: Մանկապարտեզներում ձևավորվել է 34 խումբ: Բոլոր մանկապարտեզներում պահպանվում են սանիտարահիգիենիկ պայմանները, ապահովված են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով և մեթոդական գրականությամբ:

Բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Կազմակերպված են անցնում «Կորյուն» ռազմամարզական խաղը, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերը, որի հանրապետական փուլում Արենիի միջն. դպրոցի թիմը գրավել է 1-ին տեղը: 4-րդ բանակային կորպուսում անցկացվում են հրաձգության պրակտիկ պարապմունքներ: Բոլոր միջն. դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Մարզից տասնյակ շրջանավարտներ հաջողությամբ ընդունվել և սովորում են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում և Ա. Խանփերյանցի անվան ավիացիոն ինստիտուտում:

Մարզի դպրոցականները ամբողջությամբ ապահովված են դասագրքերով: 2013-2014 ուստարվա համար ստացվել է 18735 կտոր դասագիրք և ուսոցչի ձեռնարկներ, այդ թվում 8721 կտոր պետբյուջեի ֆինանսավորմամբ, 10014 կտոր վարձակալվող: Վարձակալությամբ տրված դասագրքերի վարձավճարը կազմում է 14 555 589 դրամ: 2013թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ հավաքագրվել է 12 336 000 դրամ, կամ 85 %-ը: Վարձավճարների հավաքագրումը շարունակվում է: Դպրոցները պարբերաբար ստանում և գրադարաններում մուտքագրվում են կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակվող առարկայական գիտամեթոդական հանդեսներ և տեղեկագրեր: Դպրոցներին հատկացվող գույքի ձեռքբերման համար նախատեսված ծախսերով և դրոնոր կազմակերպությունների աջակցությամբ ըստ անհրաժեշտության թարմացվել է դպրոցական գույքը:

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն 2013թ. տարբեր առարկաներից հերթական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ

են անցել յուրաքանչյուր դպրոցի ուսուցիչների շուրջ 20 %-ը, ընդհանուր թվով 173 ուսուցիչներ: Ավարտվել է նրանց փաստաթղթային ատեստավորման գործընթացը:

Մարզի 14 համայնքների 14 դպրոցներում և 10 մանկապարտեզներում բացվել են նախակրթարաններ: Նրանցում ընդգրկվել են 195 երեխա դպրոցներում գործող նախակրթարաններում և 169 երեխա մանկապարտեզներում գործող նախակրթարաններում:

Կատարվել են բոլոր նախապատրաստական աշխատանքները <<Դպրոցական կայուն սնունդ>> ծրագրի իրականացման համար, որով տաք սնունդ կստանան մարզի 1-ինից 4-րդ դասարանի 2318 աշակերտներ: Այս ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի <<Այսօր առողջ սնունդ, վաղը՝ առողջ սերունդ>> կարգախոսի կյանքի կոչելուն:

2013թ. համագործակցության հուշագիր է ստորագրվել մարզպետարանի և <<Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս>> հասարակական կազմակերպության միջև և արդեն սկսվել են համագործակցության ուղղությամբ աշխատանքները: Այն կնպաստի դպրոցի կառավարման և կրթության կազմակերպման ժողովրդավարացմանը:

Հանրակրթական 50 դպրոցները, այդ թվում նաև ավագ դպրոցները, ապահովված են ինտերնետ կապով և կրթության վարչության ու նախարարության հետ ըստ անհրաժեշտության աշխատում են էլեկտրոնային եղանակով:

Շարժական ինտերնետային համակարգչային կայանը 2013թ. 15 օր ուսուցողական դասընթացներ է իրականացրել մարզի սահմանամերձ Խնձորուտ գյուղում: Ժամանակին և ամենայն մանրակրկիտությամբ հավաքագրվել և համապատասխան ծրագրում ԿՏԱԿ-ի մարզային համակարգողի կողմից մուտքագրվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուստարվա գործունեության մասին հաշվետվություններում արտահայտված վիճակագրական տվյալները, որոնք տրամադրվում են ՀՀ ԿԳ նախարարությանը: Մարզի հանրակրթական դպրոցները ապահովված են 496 համակարգիչներով և օժանդակ սարքավորումներով: ԿՏԱԿ-ի կողմից ներդրված էլեկտրոնային կապի միջոցով է ապահովվում ՀՀ ԿԳ նախարարություն-մարզպետարանի կրթության վարչություն-դպրոց և հակառակ ուղղությամբ կապը, որի միջոցով ժամանակին են տեղ հասնում զանազան հանձնարարականներ և վերահսկվում է դրանց կատարումը: